«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ **ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Հետազոտող ուսուցիչ՝ Կարինե Տիգրանի Սարգսյան

«Փշատավանի միջն. դպրոց» ՊՈԱԿ

Մենթոր ուսուցիչ՝ Հասմիկ Պողոսյան

ԱՐՄԱՎԻՐ-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3–4
Գրականության ակնարկ 5–12
Գործնական համատեքստ. 13–19
Ամփոփում 20
Օգտագործված գրականության ցանկ..... 21

ՆԱԽԱԲԱՆ

Երիտասարդների պատշաճ կրթությունը նրանց գլուխը բառերից, նախադասություններից և տարբեր հեղինակներից քաղված մտքերից բաղկացած զանգվածով լցնելը չէ, այլ նրանց հասկացողությունը արտաքին աշխարհին բացելը, այնպես, որ գործող ալիքը կարողանա ծնվել իրենց իսկ մտքերից, ինչպես տերևները, ծաղիկները և մրգերն են ընձյուղվում ծառի վրայի բողբոջից:

Յան Ամուս Կոմենսկի

Հիրավի, ճիշտ էր մեծն մանկավարժն իր դատողություններում, որ մարդն անդադար պետք է սովորի, ճանաչի, զննի, հարցնի ու պատասխանի, ունենա ստեղծագործելու հնարավորություն: Թերևս արդեն 21-րդ դարում նրա բոլոր մտքերը կարելի է համարել իսկական մարգարեություններ, քանզի այժմեական պահանջմունքները երեխայից, պատանուց, հասուն տարիքի մարդուց հիմնված են մի շարք կարևոր հիմնաքարի վրա, որոնցից են՝ գիտելիքը, կարողունակությունները, ստեղծագործ ու քննադատողական մտածողությունը: Դրանք, իհարկե, միշտ էլ կարևոր է եղել անհատի, հանրույթի, առհասարակ կյանքի բոլոր օղակների համար, սակայն մեզ բախտ է վիճակվել ապրել մի ժամանակաշրջանում, որտեղ այդ ամենը ոչ

միայն անհրաժեշտություն է կամ ցանկալի առավելություն, այլև պարտադիր պայման, առանց որի մարդը դադարում է լինել սոցիալական միջավայրի լիիրավ անդամը:

Սրանք սովորողի զարգացման ամենակարևոր գրավականներն են, որոնք թույլ են տալիս կյանքը նոր ճանաչող անհատին լիարժեք շփումն մեջ մտնել շրջապատի հետ, հասակակիցների և մեծահասակների հետ համատեղ հետաքրքրություններ, կարողություններ, հմտություններ ձեռք բերել ու դրանք կիրառել:

Ինչպես գիտենք, մանկավարժի գործունեությունն ուղղված է անձնավորության ձևավորմանը և զարգացմանը, նրա գերխնդիրն ու առաքելությունը մարդկային էության բացահայտումն է, հոգու կառուցումը:

Հասարակության կողմից կրթական համակարգին ներկայացվող պետական պատվերը՝ ֆիզիկապես և հոգեբանորեն առողջ սերնդի ձևավորումն է, որի իրականացնողը մանկավարժն է: Անգնահատելի է ուսուցչի կողմից հանրակրթական դպրոցում սովորողի հետ տարվող ճիշտ ու համակողմանի աշխատանքը: Վերջինիս անձի ձևավորման և զարգացման, ստեղծագործական ունակությունների խթանման մեջ էական նշանակություն ունի հենց ուսուցիչը՝ իր ստեղծագործ ու նորարար աշխատելաոճով:

Ուսումնական գործընթացում ուսուցչի կարևոր պարտականություններից է նաև սովորողի ստեղծագործականության ձևավորումն ու զարգացումը: Հասարակության մեջ իր տեղը գտնելու համար սովորողը պետք է արդյունավետ հաղորդակցվել սովորի: Ուստի և բավականին կիրառելի եղանակ է հարցադրումների օգնությամբ սովորողի ստեղծագործականության զարգացումը, որը բավականին դրական է ազդում նաև լեզվամտածողության զարգացման վրա:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ստեղծագործ անհատի ձևավորումը ուսումնական գործընթացում օրապահանջ է: Այս գործընթացն իրականացվում է բոլոր ուսումնական առարկաների դասավանդման ընթացքում: Կարևոր համարելով սովորողի մոտ ստեղծագործական կարողությունների առկայությունն ու դրան հասնելու ճանապարհին ուսուցչի անմիջական մասնակցության կարևորությունը՝ հենց այդ հանգամանքն էլ կցանկանանք համարել մեր թեմայի արդիականության հենքը:

Հետազոտության նպատակը: Սույն հետազոտության նպատակն է ցույց տալ ստեղծագործականության կարևորությունը սովորողի համար՝ համարելով դա կարևոր բաղադրիչ լիարժեք ու համակողմանի զարգացած անձնավորության ձևավորման համար:

Հետազոտության խնդիրը: Մատնանշել սովորողի ստեղծագործականության ձևավորման ու զարգացման ուղիները դպրոցում՝ հատկապես մատնանշելով հարցադրումների մեթոդը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

1.1 Սովորողների ստեղծագործականության զարգացումը դպրոցում

Ինչպե՞ս է իրականացվում դպրոցական պայմաններում սովորողների ստեղծագործականության ձևավորումը: Իհարկե, այս գործընթացում հստակ մշակված ռազմավարություն չկա, քանի որ յուրաքանչյուր սովորող ունի իր հետաքրքրությունների շրջանակն ու ստեղծագործելու մոտիվները, իսկ ուսուցիչներից ամեն մեկն ինքն է որոշում թե ինչ եղանակով պետք է հասնի այս վերջնարդյունքին: Մի բան հաստակ է. այսօր շատ է խրախուսվում ստեղծագործական մտածողությունը, նորարարությունը, հնարամտությունը, ուստի ուսուցիչն այս տեսակետից լայնածավալ աշխատանք է իրականացնում առարկայի ուսուցման ընթացքում:

Ստեղծագործականության զարգացումը սովորողին ոգեշնչում է, մոտիվացիա տալիս էլ ավելի շատ գիտելիք ու կարողունակություն ձեռք բերելու, առանց ստեղծագործականության, սովորողը կդադարի լինել յուրահատուկ, ինքնատիպ, նորարար, կդժվարանա ինքնուրույն գործել, ելքեր փնտրել դժվար իրավիճակներում, լուծել իր առաջ դրված խնդիրները:

Ինչպես նշեցինք, կրթության և դաստիարակության գործընթացում ստեղծագործ անհատականության զարգացումը ժամանակակից կրթական համակարգի կարևոր խնդիրներից մեկն է: Որպես կրթության բարձրագույն նպատակ՝ կարելի է դիտարկել ինքնազարգացող անհատականության ձևավորումը, ով ունակ է համագործակցել ստեղծագործական միջավայրի և հասարակության հետ: Սա նաև հանրակրթության նկատմամբ պետության տեսակետն է: Հանրակրթության նպատակների և պետական քաղաքականության սկզբունքների բաղադրամաս է նաև՝ « Ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը»[1]:

Մանկավարժական գիտությունը կենտրոնական խնդիրներից է համարում կրթության ազդեցությունը անհատի ստեղծագործական զարգացման վրա: Նույնիսկ Կ.Դ.Ուշինսկին, Ս.Տ.Շատսկին, Պ.Պ.Բլոնսկին և այլ ուսուցիչներ նշել են կրթական գործընթացում կրթության և դաստիարակության միասնության կարևորությունը՝ հաշվի առնելով երեխայի շահերը, կարողությունները, հնարավորություններն ու կարիքները:

Ներկայումս մանկավարժական գիտության առաջնահերթ խնդիրներից է անհատի և հասարակության միջև որակապես նոր հարաբերությունների ձևավորումը, երեխաների կրթության, ուսուցման և ստեղծագործական զարգացման առավել օպտիմալ ուղիների որոնումը: Այնուամենայնիվ, նկատելի է, որ ժամանակակից դպրոցների մեծ մասի իրական հնարավորությունները բավարար չեն լուծելու երեխայի անհատականության, ստեղծագործական գործունեության զարգացման խնդիրներ և այս առումով հիմնական հույսը ուսուցիչն է: Ստեղծագործականությունը սովորողին տալիս է հնարավորություն ստեղծել նորը, յուրահատուկը ինչպես գիտության, տեխնիկայի, արվեստի, այնպես էլ առօրյա կյանքում: Ստեղծագործական, նախաձեռնող անհատականության ձևավորման համար կյանքի աճող պահանջները և հատուկ համակարգի բացակայությունը այս գործընթացի կենտրոնում դնում են հենց ուսուցչի աշխատանքը:

Գործընթացն ավելի է դժվարանում, երբ կրթական ոլորտում նկատելի է այդ գործունեությանը պատրաստված ուսուցչական կազմի, գործընթացի համար անհրաժեշտ մեխանիզմների բացակայությունը: Ուստի այս գործընթացի համար

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docID=140362 ՀՀհանրակրթության մասին օրենք, հոդված 5, կետ 4:

անհրաժեշտ մանկավարժական պայմաններ ստեղծելու նպատակով ուսուցիչն անդադար ինքնակրթվում է՝ փորձելով բարձրացնել իր մանկավարժական որակները: «Ուսուցիչը պարտավոր է. մասնագիտական ընդհանուր եւ հատուկ կրթություն իրականացնելու նպատակով անընդհատ կատարելագործել իր մանկավարժական գիտելիքներն ու հմտությունը[2]»:

Իհարկե, ժամանակակից կրթության մեջ էական վերափոխումներ են տեղի ունենում, փոխվում են ոչ միայն նրա անհատական կողմերը, այլ ընդհանուր հայեցակարգային մոտեցումները: Սովորողի անհատականության, ստեղծագործական զարգացման հիմնախնդիրը լուծելու արդյունավետ միջոցներից մեկն էլ հիմնական և լրացուցիչ կրթության ինտեգրումն է, ինչը կարող է էական դեր խաղալ սովորողի կյանքում նրա ստեղծագործական զարգացման գործընթացի իրականացման ժամանակ: «Հանրակրթական լրացուցիչ ծրագրերը նպատակաուղղված են հիմնական ծրագրերից դուրս սովորողների նախասիրությունների և կրթական պահանջմունքների բավարարմանը: Հանրակրթական լրացուցիչ ծրագիր կարող է իրականացնել ուսումնական հաստատությունը կամ այլ կազմակերպություն՝ համաձայն իր կանոնադրության»[3]: Լրացուցիչ կրթական ծրագրերը սովորողին հնարավորություն են տալիս ակտիվորեն մասնակցել ստեղծագործականությունը խթանող տարբեր նախագծերի՝ նպաստելով սովորողներին սոցիալականացմանը, սոցիալական տարբեր դերերի կատանրմանը:

Ուսուցչի դերը սովորողների ստեղծագործականության զարգացման համար, ինչպես արդեն նշեցինք, առանցքային է: Այս ուղղությամբ տարվող ուսուցչի գործողությունները բազմազան են, առանձնացնենք դրանցից մի քանիսը.

- սովորողի ստեղծագործական ներուժի բացահայտում, համակարգում;
- սովորողին իր ընտրած գործունեության ոլորտում ուղղորդում,աշխատանքի կազմակերպման ձևերի և մեթոդների պարզաբանում;
- ստեղծագործական կարողություններով և հմտություններով սեփական անձի ապահովում;
- սովորողին խրախուսում, մոտիվացիա;
- արդյունավետ հետադարձ կապի ստեղծում;
- սովորողին ինքնանդրադարձ կատարելու հարցում օժանդակություն;
- մեթոդամանկավարժական հնարների ճիշտ ընտրություն;

[2] http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2336&Reading=0 ՀՀ օրենքը ուսուցչի կարգավիճակի մասին:
[3] https://www.arlis.am/documentview.aspx?docID=140362 ՀՀհանրակրթության մասին օրենք, հոդված 7, կետ 2:

- սովորողի ստեղծագործական ու ստեղծարար ցանկություններին դրական վերաբերմունք;
- դասի ընթացքում բարոյահոգեբանական կայուն մթնոլորտի ապահովում, բարեկամական միջավայրի խրախուսում;
- ստեղծագործականության մեջ սովորողին անհրաժեշտ միջոցներով օժանդակում:

Արտահայտված աջակցությունը երեխայի գործունեության տեսակի կամավոր ընտրության, դրա համար անհրաժեշտ նյութերի տրամադրման առումով բավականին կառուցողական աշխատելաոճ է: Սովորողի ստեղծագործականության ձևավորման ու զարգացման առաջնային փուլում անչափ կարևոր է հետադարձ կապի ստեղծումը: Հետադարձ կապը, դա մի համալիր գործողությունների շղթա է, որի միջոցով հնարավոր է զգալիորեն օպտիմալացնել ուսուցման գործընթացները: Հետադարձ կապը թույլ է տալիս սովորողին շտկել սեփական սխալները, իսկ ուսուցիչն էլ հնարավորություն է ստանում համապատասխան տեղեկատվությունից պատկերացում կազմել ուսումնական գուծընթացի այն ասպեկտների մասին, որոնց պետք է վերստին անդրադառնալ և ավելի շատ ուշադրություն դարձնել:

Բացի բացթողումների ու սխալների մշտադիտարկումից, հետադարձ կապը ուսուցչի համար հասանելի է դարձնում նաև սովորողի առավելությունները, նախասիրություններն ու հետաքրքրությունները, ինչը շատ է պետք ուսուցչին իր աշխատանքային պլանավորումների մեջ: Ուսուցիչը սովորողների ստեղծագործականության զարգացման համար պետք է կատարի հետևյալ քայլերը.

- Բացահայտել սովորողի ստեղծագործական հակումներն ու նախասիրությունները;
- Մշակել աշխատանքային գործունեության բովանդակությունն ու կառուցվածքը;
- Բացահայտել երեխաների ստեղծագործականության զարգացման հնարավորություններն ու միջոցները;
- Բացահայտել մանկավարժական պայմանները, որոնք կարող են նպաստել ուսումնական գործընթացում ստեղծագործական գործունեության զարգացմանը;
- Սովորողների հետաքրքրությունները բավարարել դասի ժամանակ;
- Կազմակերպել դասեր՝ կիրառելով ակտիվ մեթոդական հնարաներ;
- Պահպանել դասի դինամիկան;
- Խրախուսել սովորողների ստեղծագործական գործունեությունը;
- Ինքնակրթվել, գտնել նոր մոտիվացիաներ:

Այսպիսով, ստեղծագործական անհատականության զարգացումը, որը պատրաստ է սոցիալական նշանակալի գործառույթների իրականացմանը, սոցիալական փոխակերպման ժամանակակից հասարակության, նաև դպրոցի էական խնդիրներից մեկն է: Ստեղծագործական անհատականության զարգացման խնդիրը մենք դիտարկում ենք աճող մարդու իրական կարողությունների զարգացման համատեքստում, որոնք ձևավորվում և մարմնավորվում են տարբեր տեսակի ճանաչողական և ստեղծագործական գործունեության մեջ: Այս գործունեության արդյունքը միշտ չէ, որ ակնհայտ սոցիալական արժեք ունի, սակայն դրա գործընթացին մասնակցությունը սովորողի համար առաջնային նշանակություն ունի: Այս գործընթացի ընթացքում ի հայտ են գալիս նախաձեռնողականություն, ինքնուրույնություն, բացահայտվում է անհատի ստեղծագործական ներուժը: Ուստի շատ կարևոր է, որ ցանկացած ուսուցիչ իր առջև նպատակ դնի՝ ձևավորել ու զարգացնել սովորողի ստեղծագործականությունը:

1.2 Հարցադրումների մեթոդի դերը սովորողի ստեղծագործականության զարգացման գործում

Ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր կրթության գլխավոր նպատակներից մեկն է: Այս գործընթացի տրամաբանական շարունակությունը դպրոցում սովորողի ստեղծագործականության ձևավորումն ու զարգացումն է, ինչի բնականոն իրականացման հիմքը կարելի է համարել դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության արդիականացումը: Հարցադրումների կիրառությունը դասավանդման գործընթացում ամենահզոր գործիքներից մեկն է, և դրանց ճիշտ կիրառությունը զգալիորեն կարող է բարձրացնել ուսուցման որակը, ավելացնել սովորողների ներգրավվածության մակարդակը, ձևավորել ու զարգացնել ստեղծագործականությունը առարկայի դասավանդման շրջանակներում:

Հարցադրումների կիրառությունը թույլ կտա ուսուցչին ոչ միայն ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական մտածելակերպը, զարգացնել և ամրապնդել ձեռք բերվածը, այլ նաև բարձրացնել աշակերտների ներգրավվածության աստիճանը: Այստեղ կարելի է համոզմունք հայտնել այն հարցի շուրջ, որ սովորողի ներգրավվածությունը դասին մեծապես ապահովում է ուսուցման դրական որակի առաջընթացը : Ավելին, ճիշտ ձևով կազմված հարցերը, որոնք տրվում են հոգեբանորեն ապահով միջավայրում,

խրախուսում են զարգացումը ստեղծագործական և քննադատական մտածելակերպի, ինչպես նաև բարձրացնում են սովորողների ինքնավստահությունը:

Ուսուցման պրոցեսում տարբերում են դասավանդման պասիվ, ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ: Ակտիվ մեթոդները հիմնված են ուսուցիչ-սովորող համագործակցության վրա, այսինքն ուսուցիչը և սովորողը հավասարապես մասնակցում են ուսումնական պրոցեսին: Սովորողները պասիվ լսողներ չեն, այլ ակտիվ մասնակիցներ: Ակտիվ մեթոդների նպատակն է՝ բոլոր պրոցեսների՝խոսք, հիշողություն, երևակայություն օգտագործումը գիտելիքների, հմտությունների յուրացման համար: Սովորողը գիտելիք է ստանում տարբեր աղբյուրներից ինֆորմացիայի վերլուծման արդյունքում: Ակտիվ ուսուցման մեթոդները սովորելու, ճանաչողական գործունեություն ծավալելու ուղիներն են, ինչի համար ուսանողները պետք է մտածեն, ստեղծագործեն[4]: Այս մեթոդները, որոնց թվին է պատկանում նաև հարցադրումներ մեթոդը, հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, ուսանողների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման, շարժման և ռեֆլեքսիայի վրա: Սրանց կիրառումը ապահովում է ուսուցման գործընթացի արդյունավետությունը, զարգացնում սովորողների ստեղծագործականությունը: Ստացվում է ,որ այդ թվում նաև հարցադրումների մեթոդի կիրառումը ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից: Որպեսզի գործընթացն արդյունավետ լինի, ուսուցչի կողմից նախօրոք մշակված հարցադրումները պետք է լինեն.

- հստակ;
- նպատակաուղղված;
- հակիրճ;
- վերջնարդյունքին համապատասխան;
- ունենան տրամաբանական հաջորդականություն;
- մտածելու տեղիք տան;
- ստեղծեն հետադարձ կապ:

Մանկավարժության մեջ սովորողին տրվող հարցերը բաժանվում են մի քանի տեսակի, դրանք են.

- Բաց

[4] http://armedin.am/wp-content/uploads, Ակտիվ, Ինտերակտիվ ուսուցման մեթոդներ, էջ 2:

- Փակ
- Հուշող
- Ենթատեքստով
- Հետադարձ
- Ուղղորդող

Չափից շատ հարցերի օգտագործումը կարող է հանգեցնել բացասական արդյունքների և աշակերտների պասիվության: Դա կարող է հանգեցնել աշակերտներին չմասնակցելու քննարկումներին, այն կարող է առաջացնել վախի և հարցաքննության զգացողություն:

Բարձր մտածական գործընթացների զարգացման համար էական կարևորություն ունեցող տեխնիկաներից մեկը սպասելու ժամանակն է, քանի որ այն ազդում է պատասխանների որակի և քանակի, և հետագա երկխոսության առաջացման վրա: Սխալ է, երբ ուսուցիչը պատասխանում է իր իսկ հարցերին, և այդպիսի վարքագիծը արագորեն դառնում է ինքնախաբեության ձև: Սովորոբար, եթե ուսուցիչը նպատակ է դրել հարցադրումների մեթոդի օգնությանմբ զարգացնել սովորողների ստեղծագործականությունը, հարցը պիտի ձևակերպվի հետց այդ ենթատեքստի շրջանակներում: Օրինակ՝ Կարծու՞մ ես այդպես ճիշտ է, կամ ինչպե՞ս կվարվես, եթե...: Սովորողն այսպես դուրս է գալիս գիտականության կաղապարից և հնարավորություն ունենում անկաշկանդ երևակայել, հորինել, պատասխանել ստեղծագործաբար:

Բարձր մտածական գործընթացների, ստեղծագործականության զարգացման համար էական կարևորություն ունի սպասելու ժամանակը, քանի որ այն ազդում է պատասխանների որակի և քանակի, ինչպես նաև հետագա երկխոսության առաջացման վրա: Սպասելու ժամանակը հարցի և աշակերտի պատասխանի միջև ընկած ժամանակահատվածն է կամ ուսուցչի առաջին և երկրորդ հարցերի միջև ընկած ժամանակահատվածը: Եթե հարցը լսելուց հետո աշակերտները չեն արձագանքում համեմատաբար կարճ ժամանակահատվածում, ուսուցիչը հաճախ պետք է փորձի առաջ տանել զրույցը՝ կրկնելով, վերաձևակերպելով հարցը կամ դիմելով աշակերտներին: Ավելի բարդ հարցերի դեպքում, որոնք պահանջում են բարդ կոգնիտիվ վերլուծություններ, հնարավոր է անհրաժեշտ լինի տրամադրել աշակերտներին 1-2 րոպե, նախքան պատասխանելը:

Եկեք նկատենք, որ հարցադրումների մեթոդի հիմքը սովորողի լեզվամտածողությունն է, խոսքային կարողությունը: Բանավոր խոսքը անհատի մտավոր կարողությունների կարևոր դրսևորումներից է: Դրա զարգացումը տեղի է ունենում մարդու կյանքի ընթացքում և անընդհատ ենթարկվում է մշակման և

հետևողական լինելը պարտադիր է: Սովորողի համար պետք է անընդհատ ապահովել շփման ու հաղորդակցման համար լիարժեք պայմաններ: Սովորողը պետք է վստահի խոսակցին, ցանկանա խոսել, հաղորդակից դարձնել իր մտքերին, պահի իր ներսում եղած խոհերի մասին: Դա հնարավոր է ապահովել միայն համապատասխան միջավայրի, բարյացակամ վերաբերմունքի և ուշադիր, հետաքրքրասեր ունկնդրության մթնոլորտ ստեղծելու դեպքում:

Պակաս կարևոր չէ չկաշկանդել սովորողի ինքնուրույն մտածողությունն ու դրանից բխող ոչ հավաստի ու մտացածին խոսքը, քանի որ ցանկացած միտք պետք է հնչի, որպեսզի կյանքի այդ կարևոր փուլում սովորողը ստանա բոլոր անհայտների պատասխանները: Հարկավոր է թույլ տալ, որ սովորողը իր մեջ կուտակված ֆանտազիաները, պատկերացումներն ու երազանքներն անպայման արտաբերի: Այսպես մենք չենք նվաստացնում նրա կամարտահայտության իրավունքը, ավելին՝ նա ավելի արագ է ինտեգրվում սոցիալական միջավայր, գիտակցում իր դերը՝ աշխարհին նայելով ստեղծագործ աչքերով:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ուսուցչի կողմից տրվող կառուցողական, բազմաբովանդակ հարցերը դասի ընթացքում ոչ միայն թույլ են տալիս չափել սովորողի իմացածի ու չիմացածի սահմանները, գնահատել նրա խոսքային կարողությունները, այլ նաև մեծապես նպաստում են վերջինիս ստեղծագործականության ձևավորմանն ու զարգացմանը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Հետազոտությունը անցկացրել եմ Արմավիրի մարզի «Փշատավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ–ի ութերորդ դասարանում, որտեղ սովորում է 33 աշակերտ: Հետազոտության սկզբնական դասին սովորողները պատկերացում կազմեցին մակբայների մասին, կարողացան զանազանել մակբայների խոսքիմասային պատկանելությունը և նախադասությունները հարստացնել մակբայներով: Իհարկե դասին ոչ բոլոր աշակերտներն էին հետաքրքրված, ոչ բոլորը կարողա–ցան ակտիվ ներկայացնել դասը կամ գտնել պատճառահետևանքային կապերը, դրսևորել վերլուծական մտածողություն: Որպեսզի կարողանամ դիտարկել նրանց ցուցաբերած հետաքրքրասիրությունը , ակտիվությունը, ճանաչողական, վերլուծա–կան մտածողությունը, ստեղծագործական մտածելակերպի զարգացումը, խոսքային կարողությունները հրավիրել էի դասալսման դիտարկող՝արդեն կազմված դիտարկման թերթիկով:

Կանցկացնեմ նաև հայտորոշիչ թեստ՝ սովորողի իմացության արդյունքները վեր–լուծելու համար:

Հետազոտության սկզբում ըստ դասալսողի դիտարկումների՝ գրանցվեցին հետև–յալ արդյունքները:

Դասալսողի դիտարկումները՝ ստուգողական դաս

Դասալսողի անուն ազգանունը՝ Մ. Կարապետյան

Սովորողի հետաքրքրություն

Սովորողների հետաքրքրությանը բնորոշ վարքագիծ	Տվյալ վարքագիծը բնորոշ աշակերտների թիվը:
Հետաքրքրված	20
Ակտիվ մասնակցում էին դասերին	12
Հարցեր է տալիս	8
Պատասխանում է մարտահրավերային հարցերին	7
Առաջարկում է նոր մտքեր	4
Առաջարկում է պատճառահետևանքային կապեր	4
Ընկերներին բացատրում է անհասկանալի հարցերը	5
Անտարբեր է	4

Ինչպես երևում է, ըստ դասալսողի դիտարկումների, սովորողների կեսից մի փոքր ավելին հետաքրքրված է դասով,մոտավոր կեսը ակտիվ պատասխանում է հարցե–րին, համեմատաբար քիչ թվով սովորողներ պատասխանում են մարտահրավերային հարցերին, առաջարկում են նոր մտքեր, գտնում են պատճառահետևանքային կա-պեր կամ ընկերներին կարողանում են բացատրել անհասկանալի հարցերը:Ճիշտ է, դասին անտարբեր աշակերտներ կայ ին, բայց նրանց թիվը փոքր էր:

Բացի դասալսողի դիտարկման արդյունքներից, սովորողների ուսումնական գործունեության արդյունքները ճշգրտելու համար դասի վերջում անցկացրել եմ նաև հայտորոշիչ թեստ:

Արդյունքը հետևյալն է.

Հայտորոշիչ թեստի արդյունքները՝ ստուգողական դաս

Ստացած գնահատականներ	Աշակերտների թիվ
1-3	3
4-6	9
7-8	12
9-10	8

Ըստ հայտորոշիչ թեստի տվյալների սովորողների առաջադիմությունը 90%՝ է, իսկ որակական ցուցանիշը 60% :

Ամփոփելով արդյունքները հետազոտության սկզբնական փուլում՝ սովորողների կեսից մի փոքր ավելին հետաքրքրված է եղել դասի ժամին, որն արտահայտվել է ակտիվ հարցեր տալով կամ հարցերին պատասխանելով, ինչը մոտավորապես արտահայտվում է հայտորոշիչ թեստի տվյալներով, սովորողների գրանցած որա–կական ցուցանիշերով:

Հետազոտական առաջին դասը ՝

Դասը սկսեցի մտագրոհով.

Խմբային աշխատանքի արդյունքում սովորողների հնչեցրած պատասխանների հիման վրա հիմնական հասկացությունները քարտեզագրեցի գրատախտակին, այնուհետև հարցերի միջոցով այնպես ուղղորդեցի սովորողներին, որպեսզի իրենք գտնեն անցած խոսքի մասի /ածականի/ և նոր դասի/մակբայի/ միջև կապը : Մասնավորապես.

Նոր դասը հաղորդվեց բարձրաձայն ընթերցանության մեթոդով, որի ժամանակ սովորողները գրի առան դասի հիմնական հասկացությունները:

Հետազոտական 2-րդ դասը ՝ սկսեցի **հարցադրումների** մեթոդով՝

. Ի՞նչ ցույց տալիս մակբայը:

. Ի՞նչ ձևաբանական առանձնահատկություն ունի:

. Մատնանշել մակբայի շարահյուսական դերը:

. Թվել այն ածանցները, որոնցով կազմվում են մակբայներ:

Սովորողները ակտիվ պատասխանեցին հարցերին, հատկապես հարցերը ձևակեր–պել էի այնպես, որ իրենց հնչեցրած պատասխանները նրանց նախապատրաստելու էին նոր դասի հաղորդմանը: Նոր դասը (տեղի մակբայներ) հաղորդելիս, կիրառեցի **մտքերի քարտեզագրման** մեթոդը, կարևոր հասկացությունները գրեցի գրատախտակին:

Նախորդ դասի օրինակով ակնկալում էի, որ սովորողները մեծ հետաքրքրությամբ հետևելու են դասին,ինչը այդպես էլ եղավ:

Թե ինչպես են ընկալել նոր նյութը, պարզեցի հարցերի միջոցով՝

. ի՞նչ է ցույց տալիս տեղի մակբայը:

.Ի՞նչ հարցի են պատասխանում տեղի մակբայները:

. Մատնանշել մակբայների և դրանց հարաբերակից մակբայների տարբերությունը:

Հետազոտական երկու դասերին սովորողների հետաքրքրասիրության ,ակտիվութ–յան, գիտելիքների ընկալման, վերլուծական կարողությունները դիտարկել աղյուսակում.

Դասալսողի անուն ազգանունը՝ Մ. Կարապետյան

Սովորողների հետաքրքրությանը բնորոշ վարքագիծ	Տվյալ վարքագիծը բնորոշող աշակերտների թիվը	
	1-ին դաս	2-րդ դաս.
Հետաքրքված է	31	32
Ակտիվ պատասխանում է հարցերին	17	24
Հարցեր է տալիս	9	11
Պատասխանում է մարտահրավերային հարցերին	10	12
Առաջարկում է նոր մտքեր	5	7
Գտնում է պատճառահետևանքային կապեր	8	13
Ընկերներին բացատրում է անհասկանալի հարցերը	6	8
Անտարբեր է	2	1

Բացի դասալսողի դիտարկումներից հետազոտական երկու դասերին սովորողների փորձի օգնությամբ ուսուցման արդյունավետությունը դիտարկելու համար, անցկացրել եմ հայտորոշիչ :

Գրանցվել են հետևյալ արդյունքները.

Հայտորոշիչ թեստ՝ հետազոտական երկու դասերի արդյունքները.

Ստացած գնահատական	Հետազոտական 1-ին դաս	Հետազոտական 2-րդ դաս
1-3	2	1
4-6	7	5

7-8	15	16
9-10	9	11

	Ստուգողական դաս	Հետազոտական դաս 1–ին	Հետազոտական դաս2–րդ
Առաջադիմություն	90%	93%	96%
Որակական ցուցանիշ	60%	72%	81%



ՕՐՎԱ ԴԱՍ ՊԼԱՆ

Ուսուցիչ՝	Կարինե Սարգսյան
Առարկա՝	Հայոց լեզու
Դասարան , կիսամյակ	8-րդ դասարան , 1- ին կիսամյակ
Թեմա՝	Մակբայը՝ որպես խոսքի մաս
Օգտագործվող նյութեր՝	Գիրք, տետր, գունավոր թղթեր, պաստառ,գծապատկեր:
Նպատակ	Գաղափար կազմել մակբայների մասին, խոսքը հարստացնել մակբայներով, իմանալ նրանց կիրառության շրջանակները:

Վերջնարդյունքները՝	Աշակետը կկարողանա ճանաչել և տարբերել մակբայը ածականից: Նախադասության մեջ կկարողանա գտնել մակբայները՝ որպես բայական լրացումներ:
Դասի ընթացքը՝, մեթոդներ, Սկիզբը՝ 3րոպե Հիմնական մաս՝ 20-25րոպե Խմբային աշխատանք 12 րոպե	Դասի տիպը՝ **նոր նյութի հաղորդման** : Կիրառվող մեթոդները՝ **հարցեր և հարցադրումներ, մտագրոհ,խմբային աշխատանք,մտքերի քարտեզագրում** **Մտագրոհի** միջոցով կրկնել անցած խոսքի մասերը, թվարկել նրանց առավել կարևոր առանձահատկությունները: Նախապատրաստական փուլում ուսուցիչը դասարանը բաժանվել է 4 համագործակցային խմբերի, որոնք ստացել են քարտեր, տրվել է հետևյալ հանձնարարությունը. գրել,թե ինչ խոսքի մասեր կան տրված նախադասություններում: 1-ին խումբ - Ով որ ճանաչել է Ռաֆֆիին, գիտի,որ նա նկարչության առանձնահատուկ ձիրք ու ճաշակ ունի: 2-րդ խումբ - Դուրյանի հայրը զբաղվոսւմ է իրենց պապենական արհեստով և կարճ ժամանակամիջոցում արհեստավորի անուն է վաստակում: 3-րդ խումբ - Մեծարենցի գրական ճակատագիրն այնպես դասավորվեց, որ նա սկզբում քննադատվում էր պարբերական մամուլում: 4–րդ խումբ–Շիրվանզադեի բարի ու զգայուն մորաքույրը պանդխտության մեջ դարձավ երկրորդ մայր: Աշակերտները գրում են յուրաքանչյուր նախադասության բառակապակցությունները. 1 ին խումբ՝ առանձնահատուկ ձիրք ու ճաշակ 2-րդ խումբ՝ պապենական արվեստ և կարճ ժամանակամիջոց 3–րդ խումբ՝ գրական ճակատագիր և պարբերական մամուլ 4–րդ խումբ՝ բարի և զգայուն մորաքույր Ուսուցիչը աշակերտների ուշադրությունը հրավիրում է ընդհանրությանը,որ ածականները լրացնում են գոյականների և պատասխանում են ինչպիսի՞ հարցին: Այնուհետև ուսուցիչը գրում է գրատախտակին երկու նախադասություն 1. Երեկ մենք շատ ***ուրախ*** երեկո անցկացրինք: 2. Երեխաները ***ուրախ*** թռչկոտում էին այգում: Ուսուցչուհին «**Հարցեր և հարցադրումներ**» մեթոդի միջոցով պարզում է **ուրախ** բառի խոսքիմասային պատկանելությունը՝ նշելով ,որ մակբայները դառնում են բայական լրացումներ:
Ամփոփում 5-րոպե	Կատարվում ամփոփում հարցադրումների միջոցով: Վերստին կրկնելով,որ բայական լրացում լինելը մակբայի շարահյուսական դերն է: Իրականացնել միավորային գնահատում ՀՊՉ վերջնարդյունքով պայմանավորված:
Տերմիններ և հիմնական գաղափարներ	Մակբայ, բայական անդամի լրացում
Տնային առաջադրանք	Կազմել նախադասություններ՝ նշելով բառակապակցությունների խոսքիմասային պատկանելությունը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր վերլուծության արդյունքից ելնելով՝ կատարենք մի քանի առաջարկություն.

- Կյանքը շատ ավելի հետաքրքիր է դառնում, երբ ստեղծվում են նոր մարտահրավերներ, ուստի, կարծում ենք, սովորողների համար հարկավոր է մշտապես առաջադրել իրավիճակներ ու ակնկալել ստեղծագործական լուծումներ:
- Երեխաները բնածին նկարիչներ, գիտնականներ, գյուտարարներ են, միայն հարկավոր է դա տեսնել ու թևեր տալ նրանց: Այստեղ ամեն բան կախված է նաև ուսուցչից: Կարծում ենք, որ ուսուցիչը պետք է մշտապես կիրառի քաջալերելու, խրախուսելու, այլ ոչ պախարակելու ու պիտակավորելու մոտեցումը:
- Սովորողների հետ շատ պետք է խոսել, շփվել, թույլ տալ, որ նրանց մոտ ձևավորվի երկխոսելու ու մենախոսելու կարողությունները, ուստի նպատակահարմար ենք համարում դասի ընթացքում դիմել հարցադրումների մեթոդին:
- Կարելի է ստեղծագործականությունը խրախոսել սեփական օրինակով: Ուսուցիչը կարող է հաճախ պատմել իր՝ արվեստի, գրականության և երաժշտական նախասիրություններից: Այսպես կձևավորվի վստահության մթնոլորտ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով,ընդհանրացնել ով մեր ուսումնասիրության արդյունքները, կարող ենք կատարել հետևյալ դիտարկումները.

- Սովորողների կրթության, դաստիարակության լիարժեքության համար, պարտադիր պայման է վերջիններիս ստեղծագործականության ձևավորումն ու զարգացումը հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսումնական ծրագրերով նախատեսված առարկաների, ինչպես նաև արտադասարանական ու արտադպրոցական միջոցառումների, էքսկուրսիաների շրջանակներում:
- Կիրառելով հարցադրումների տարատեսակները՝ ուսուցիչը կարող է միջավայր ստեղծել, որպեսզի զարգանա սովորողի ստեղծագործականությունը:
- Ուսուցչի մասնագիտական որակները, նորարարական գաղափարների ներդրումը դասին մեծապես կօգնի սովորողին նույնպես հանդես գալ որպես նորարար, նախաձեռնող ու ստեղծագործ:

- Ուսումնական գործընթացում կիրառվող մեթոդները, ակտիվ ու աշակերտակենտրոն դասերը ուղիղ ազդեցություն կարող են ունենալ սովորողի ստեղծագործականության զարգացման վրա:

Կարծում ենք՝ այս ուսումնասիրությունը կունենա իր դրական ազդեցությունը մեր մանկավարժական հետագա գործունեության վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docID=140362 ՀՀ հանրակրթության մասին օրենք:
2. http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2336&Reading=0 ՀՀ օրենքը ուսուցչի կարգավիճակի մասին:
3. http://armedin.am/wp-content/uploads, Ակտիվ, Ինտերակտիվ ուսուցման մեթոդներ: